

2015թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԲԱԶԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

Թեմայի անվանումը

Գիտության և կրթության ազդեցությունը տնտեսական ու

սոցիալական զարգացման վրա

Թեմայի իրականացման համար նախատեսված ժամանակահատվածը

1 ՏԱՐԻ

Հաշվետու ժամանակահատվածը

01.01.2015թ. - 31.12.2015թ.

Թեմայի ղեկավարը

ՍՈՒՎԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ ՄԻՔԱՅԵԼԻ

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Թեմայի մասնակիցներ

1. Մարգարյան Վարդան Ալբերտի – ավագ գիտաշխատող
2. Հայրապետյան Ռուբեն Արմենի - ավագ գիտաշխատող
3. Ասատրյանց Մարգիս Արմենի - ավագ գիտաշխատող
4. Քոչարյան Մարիանա Ռաֆիկի – կրտսեր գիտաշխատող

Ծրագրի համառոտ բովանդակությունը

Սույն հետազոտության ընթացքում դիտարկվելու են ՀՀ մարզերում և համայնքներում կրթության և գիտության զարգացման հիմնական ցուցանիշները, դրանց առնչությունները տնտեսական աճի, իրական տնտեսության ճյուղային կառուցվածքի, դրա բազմատեսականացման, ծառայությունների ոլորտի և սոցիալական զարգացումների վրա:

Առանձնակի կարևորվելու են նորամուծական զարգացման, գործազրկության և աղքատության մակարդակի կրճատման խնդիրները: Այս առումով, հետազոտության խնդիրներից մեկն է լինելու Հայաստանի Հանրապետությունում տնտեսության ներառական աճի ապահովման հեռանկարների բացահայտումը: Տնտեսական աճի ապահովման նման մոտեցումը խարսխված է մարդկային կապիտալի զարգացման, սոցիալական պաշտպանության համակարգի բարելավման, հանրային կառավարման համակարգի կատարելագործման, ինչպես նաև սոցիալական զարգացման մի շարք ուղղությունների վրա: Հետևաբար՝ տնտեսության ներառական աճի ապահովման տրամաբանությունը ենթադրում է վերոնշյալ ոլորտների համակարգային ուսումնասիրություն՝ բացահայտելով դրանց միջև առկա կապերը և փոխառնչությունները: Այս համատեքստում ներկայացվելու են ՀՀ-ում տնտեսական և սոցիալական զարգացման մոտեցումներ՝ հիմնված մարդկային կապիտալի զարգացման և դրա միջոցով ներառական աճի ապահովման վրա, որի դեպքում, անշուշտ, առաջնային է լինելու գիտության և կրթության դերը:

Գնահատվելու է գիտակրթական համակարգի տարածաշրջանային զարգացման նշանակությունը հանրապետության մարզերի և համայնքների տնտեսական ու սոցիալական զարգացման մակարդակների համահարթման գործում:

Վերջին տարիներին էական միջոցառումներ են իրագործվել հանրապետությունում և նաև տարածաշրջաններում կրթության որակի բարձրացման, հանրակրթության կառավարման բարեփոխումների ուղղությամբ:

Երկրում տնտեսական կայուն զարգացման ապահովման համար չափազանց կարևորվում է նորամուծությունների՝ արտադրանքի նոր տեսակների, նոր տեխնոլոգիական գործընթացների ներդրումը, ինչը պայմանավորվում է գիտության զարգացմամբ: Այս առումներով ուսումնասիրվելու և գնահատվելու են

գիտակրթական բարեփոխումների, գիտության և կրթության կառավարման ներգործությունը հանրային կառավարման արդյունավետության վրա:

Միաժամանակ տնտեսական և սոցիալական աճի, տարածաշրջանների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների համահարթման, հանրային կառավարման արդյունավետության բարձրացման նպատակներով բացահայտվելու են գիտակրթական համակարգի մակրո և միկրոմակարդակներում հետագա բարեփոխումների գերակայությունները:

Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը

Հավաքել և մշակել տեղեկատվություն ՀՀ մարզերում և համայնքներում գիտակրթական, տնտեսական ու սոցիալական զարգացման ցուցանիշների վերաբերյալ: Հավաքել անհրաժեշտ տեղեկատվություն, ուսումնասիրել միջազգային փորձը:

Կատարել վիճակագրական և տնտեսամաթեմատիկական հաշվարկներ գիտակրթական համակարգի ազդեցությունը տնտեսական ու սոցիալական զարգացման վրա գնահատելու նպատակով: Իրականացնել հետազոտության գրավոր արդյունքների սեմինար-քննարկումներ:

Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները

Վերլուծել ստացված տեղեկատվությունը, մշակել սկզբունքներ գիտակրթական համակարգի և տնտեսական ու սոցիալական զարգացման առնչությունները գնահատելու համար: Համապատասխան ցուցանիշների համար ստեղծել տվյալների բազա:

Գնահատել գիտակրթական համակարգի և դրա կառավարման բարեփոխումների ազդեցությունը հանրային կառավարման արդյունավետության բարձրացման վրա:

Բացահայտել գիտակրթական համակարգի ազդեցությունը մարզերի, համայնքների և հանրապետության տնտեսական ու սոցիալական զարգացման ցուցանիշների վրա: Հետազոտության արդյունքում ներկայացնել տնտեսական և

սոցիալական զարգացման հեռանկարները: Հաշվետվություն, հոդվածներ,
մենագրություն: